# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ողջաբերդ, 2-42-26, norik.melkonyan@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 հոկտեմբերի 2020 թվականի N 30-Ա

## ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 48-րդ հոդվածի պահանջով, հիմք ընդունելով Ողջաբերդ համայնքի սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմաններն ուսումնասիրող հանձնաժողովի զեկուցագիրը և Ողջաբերդ համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 15-ի 03-Ա որոշումը՝

*որոշում եմ՝*

1.Ողջաբերդ համայնքի 2020 թվականի չորրորդ եռամսյակի սոց. օգնության գումարից 40000 /քառասուն հազար/ դրամ տալ համայնքի բնակիչ Ռուզաննա Գասպարյանին:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ**

20*20*թ. *հոկտեմբերի* *01*

գ.Ողջաբերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ողջաբերդ, 2-42-26, norik.melkonyan@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 հոկտեմբերի 2020 թվականի N 31-Ա

## ՈՂՋԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-Ի ԹԻՎ 33-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ''Նորմատիվ իրավական ակտերի մասին'' օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով և հիմք ընդունելով Մարգարիտ Մարկոսյանի՝

*որոշում եմ՝*

1.Ուժը կորցրած ճանաչել Ողջաբերդ համայնքի ղեկավարի 2018 թվականի սեպտեմբերի 19-ի ''Արթուր Հովհաննեսի Մարկոսյանի նկատմամբ հոգաբարձու ճանաչելու մասին'' թիվ 33-Ա որոշումը:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ

2020 թ. հոկտեմբերի 19

գ.Ողջաբերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ողջաբերդ, 2-42-26, norik.melkonyan@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հոկտեմբերի 2020 թվականի N 32-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10,11,22.1 կետերի պահանջներով և հիմք ընդունելով հանգուցյալ Սաթիկ Հովհաննիսյանին պատկանող Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնքի 1-ին փողոցի թիվ 46 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման դիմումը և այն, որ ըստ համայնքի կադաստրային քարտեզի և տեղում կատարված ուսումնասիրության հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված ցանկում, ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյետների օտարման կամ անվտանգության գոտիներում,կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով , չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝

*որոշում եմ՝*

1.Հանգուցյալ Սաթիկ Հովհաննիսյանին պատկանող ՀՀ Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնքի 1-ին փողոցի թիվ 46 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված S=33,65քմ նկուղը, S=12,25քմ, S=1,89քմ և S=8,61քմ աստիճանավանդակները, S=117,97քմ 1-ին հարկը, S=54,18քմ, S=18,81քմ և S=11,04քմ բաց պատշգամբները, S=156,67քմ 2-րդ հարկը, S=78,80քմ ձեղնահարկը, S=4,16քմ կաթսայատունը և S=8,63քմ պարիսպը համարել օրինական:
2.Հաշվի առնելով, որ ինքնակամ շինությունները կառուցվել են 2001 թվականի մայիսի 15-ից առաջ, ինքնակամ շինությունների

օրինականացման համար վճար չի գանձվում:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն.ՄԵԼՔՈՆՅԱՆ

2022թ. հուլիսի 27

գ.Ողջաբերդ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ողջաբերդ, 2-42-26, norik.melkonyan@mail.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

30 հոկտեմբերի 2020 թվականի N 33-Ա

### ՈՂՋԱԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Համայնքային ծառայության մասին>> օրենքի 20-րդ հոդվածի պահանջներով,հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2011 թվականի մայիսի 3-ի <<Համայնքային ծառայողների վերապատրաստման կարգը սահմանելու մասին>> N 05-Ն հրամանի՝

***որոշում եմ***

1. Հաստատել Ողջաբերդի համայնքապետարանի աշխատակազմի 2021 թվականին վերապատրաստման ենթակա համայնքային ծառայողների ցուցակը՝ ***համաձայն հավելվածի***:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն.ՄԵԼՔՈՆՅԱՆ

2020թ. հոկտեմբերի 30

գ.Ողջաբերդ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ողջաբերդ, 2-42-26, norik.melkonyan@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 նոյեմբերի 2020 թվականի N 34-Ա

## ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով,<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 4-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Ողջաբերդ համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 28-ի N 21-Ն որոշումը՝

***որոշում եմ***

1.2020 թվականի նոյեմբերի 06-ից կազմակերպել հանրային քննարկումներ Ողջաբերդ համայնքի 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանի, այսուհետ՝ ՏԱՊ, նախագծի, Ողջաբերդ համայնքի վարչական տարածքում 2021 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու և Ողջաբերդ համայնքի 2021 թվականի բյուջեի նախագծի վերաբերյալ:

4. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Մարիամ Կարապետյանին՝ համայնքապետարանի ինտերնետային կայքում և համայնքի տեղեկատվական կառավարման համակարգում տեղադրել Ողջաբերդ համայնքի 2021 թվականի ՏԱՊ-ի նախագիծը, տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի և 2021 թվականի բյուջեի նախագծի վերաբեյալ կազմակերպվող հանրային քննարկումների հրավերը՝ ***համաձայն հավելվածի:***

4. Իրազեկման համար այն փակցնել համայնքի ղեկավարի նստավայրում՝ բոլորի համար տեսանելի տեղում և այն վայրերում, որոնք մատչելի են համայնքի բնակիչներին՝առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երեքհարյուր բնակչի համար:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ**

2020 թ. նոյեմբեր 05
գ.Ողջաբերդ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ողջաբերդ, 2-42-26, norik.melkonyan@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 նոյեմբերի 2020 թվականի N 35-Ա

## ՈՂՋԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք ընդունելով Ողջաբերդ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 32-Ն որոշման 2-րդ կետը՝

***որոշում եմ***

1.Ողջաբերդ համայնքի 2020 թվականի բյուջեում կատարել վերաբաշխում.

1) համայնքի բյուջեի 10.07.01. 4729 հոդվածից 50 000 /հիսուն հազար/ դրամ գումարը վերաբաշխել 10.07.01. 4726 հոդվածին:

2)համայնքի բյուջեի 08.02.04. 4267 հոդվածից 33 000 /երեսուն երեք հազար/ դրամ գումարը վերաբաշխել 08.02.04. 4767 հոդվածին

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն.ՄԵԼՔՈՆՅԱՆ

2020թ. նոյեմբերի 13

գ.Ողջաբերդ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ողջաբերդ, 2-42-26, norik.melkonyan@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 նոյեմբերի 2020 թվականի N 36-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 17-րդ հոդվածի դրույթներով՝

*որոշում եմ*

1. 2020 թվականի նոյեմբերի 23-ին ժամը $11^{00}$-ին հրավիրել ավագանու արտահերթ նիստ՝հետևյալ օրակարգով.
1.Ողջաբերդ համայնքի 2020 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի հաշվետվության մասին
2.Ողջաբերդ համայնքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների քննարկման մասին
3.Համաֆինանսավորման պայմանագրի կնքմանը համաձայնություն տալու մասին
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից;

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ

2020 թ. նոյեմբերի 20

գ.Ողջաբերդ